ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ

ՉԻՆԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

14. Մարտ .2016Թ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 6

ՉԻՆԱՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի ԹԻՎ 4 ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Անվավեր ճանաչել Չինարի համայնքի ավագանու 2016 թվականի մարտի 2-ի թիվ 4 որոշումը:

ՉԻՆԱՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՍԱՂՈՅԱՆ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ

ՉԻՆԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

14. Մարտ .2016թ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 7

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, ՀՀ "Հողային օրենսգրքի" 63-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով "Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց" փակ բաժնետիրական ընկերությանը հողամասեր օտարելու մասին ՀՀ կառավարության 20.01.2016թ. N 34-Ա որոշումը, համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ու Մ Է՝

1. Տալ համաձայնություն՝ համայնքի սեփականություն համարվող, 9փ.-3փակ. 7տուն հասցեում գտնվող 0,0064 հա հողամասը (ծածկագիրը 11-051-0009-0024, նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, գործառնական նշանակությունը՝ կապի) ուղղակի վաճառքի ձևով օտարել "Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց" փակ բաժնետիրական ընկերությանը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում վերգետնյա թվային հեռուստահեռարձակման համակարգի ներդրման ծրագրի իրականացման նպատակով:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով՝ 11184 ՀՀ դրամ:

Կողմ Ձեռնպահ՝ 0 դեմ՝ 0

1 Աղասյան Արամայիս Լևոնի
2. Միրզոյան Լորիս Կամսարի
3.Մակարյան Գարեգին Արիսի
4.Դալլաքյան Գրետա Գարեգինի
5.Ծերունյան Արմեն Յուրիկի

Չինարիի համայնքի ղեկավար՝ Ս.Սաղոյան